ԼՐԱԳԻՐ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՑԻՍԻ 9 — Հ. 64 — 1864 ԱՄԻ

ՕԱՆՈՒՑՈՒՄՆ

ՀԱՅԿԱԿԱՆԵՐԻՆ ԵՐՐՈՐԴ տարին ակսաւեցաւ Օգոստոսի 1 ին անցեալ 1863 ամի: — ՀԱՅԿԱԿԱՆԻ տարեկան գինն է 6 ռուբ. արծ. կանխիկ վճարելի: — ՀԱՅԿԱԿԱՆԸ ամ ամսօր հրատարակի երկու անգամ՝ Շաբաթ օրերը: — ՀԱՅԿԱԿԱՆԵՐԻՆ բաժանուդ էջուածը կազմէ 44 երդոյդ համարին մինչև տարւոյ հրատարակուած բոլոր համարները: — ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ կամ ԽՄԲԱԳՐԱՏԱՆՈՅ վերաբերեալ նամակները հարկաւոր է ուղղել տարւոյն հասցէին. Въ Редакцію армянской газеты „Вѣстника Россіи", издаваемаго Зармайромъ Мсеріанцъ, въ Москвѣ въ Армянскомъ пер. въ д. Армян. церкви.

Մոսկուա, ի 12 Ապրիլ 1864 ամի:

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամբաստանելիս նախընթաց համարին մէջ, Օէյլթունցւոց Պատրիարքն եւ կղեցւոյն յարելու անհրժեշտ ցանկութիւն վերայ խօսուելու ժամանակ ի մէջ բերուած էր Կ. Պօլսոյ Courrier d'Orient լրագրի թղթակցի նամակը, որոյ մէջ կային եւ հետեւեալ ուշադրութեան արժանի տողերն. »Իրենց (Օէյլթունցւոց) ազգային եկեղեցին կըընանք, »ըսել, ասում էր յիշեալ լրագրի թղթակիցը, թէ գերագոյն զրուխս մը չունի, ըստ որում իրենց Պատրիարքը »կամ Պատրիկոսը Ռուսիոյ մէջ կը»նստի, ուսկից իր հետեւոր թեմերուն »վրայ իրաւասութեան սուրբ մը գործ »կ'ածէ: Իր այս կորսուելու վրայ եղող »իշխանութիւնը ձեռք անցունելու հա»մար՝ եպիսկոպոս կը ձեռնադրէ այնպի»սի անձինք՝ որոնք փառասիրութեան »շարժառիթով միայն հասնիլ կուզեն »այս բարձր աստիճանին, և Պատրիար»կան ալ առանց նախապէս կղերին »կամքն հարցունելոյ՝ զանոնք եկեղե»ցւոյ հովուութեանը կը ղրկէ: Ասկից »զրեթէ ընդհանուր դժգոհութիւն մը »ծագած է այս կողմերն այդ Պատրիար»կոսին դէմ, և կամովին կը ձգեն զինքը, »ըստ որում՝ ոչ երկիւղ և ոչ յոյս մը »ունին իրմէ« (Տե՛ս ամ. 16):

Ճշմարիտ են արդեօք այդ տեղեկութիւնքդ: Զրեթէ ճշմարիտ են, յաւելի պիտուած մեր ազգի համար:

Յայտնի է ամենեցուն՝ որ մեր հայրապետական նախամեծար Աթոռոյ Ամրատեան Մայր եկեղեցւոյ Պատրիարքն՝ կոչուում է և է Եպիսկոպոսապետ և Պատրիկոս ամենայն Հայոց. վասն որոյ վերոյիշեալ նամակի խօսքերն՝ թէ „Օէյլթունցւոց եկեղեցին գերագոյն դլուխ չունի, որովհետեւ մեր Պատրիկոսն գտանուում է ի Ս. Էջմիածին, որ տեղից իւր հետեւոր թեմերուն վրայ միայն իրաւասութեան սուրբ է կարողանում գործ ածել, որովհետեւ նա կորուսանում է այժմ իւր իշխանութիւնը, որովհետեւ Տաճկաստանի Հայերն „ոչ յոյս ունին նորանից և ոչ երկիւղ" անհասկանալի են մեզ, որովհետեւ մեր Էջմիածնական Պատրիկոսն՝ Պատրիկոս գոլով Ընդհա՛նր Հայոց, ինչպէս է կարելի որ իւր հետեւոր թեմերուն վերայ իրաւասութեան սուրբ միայն ի գործ ածէ. ոչ ապաքէն նորա իրաւասութիւնն և իշխանութիւն ի հոգևորս՝ միօրինակ զօրութի պարտին ունենալ թէ Ռուսիոյ, թէ Տաճկաստանի, թէ Հնդկաստանի մէջ, և թէ այլուր: Զրեթէ ճշմարիտ է այն՝ թէ մեր Էջմիածնական Պատրիկոսն իւր հետեւոր թեմերուն վերայ միայն իրաւասութեան սուրբ է գործ ածում, թէ՝ Տաճկաստանի Հայերն ոչ յոյս ունին և ոչ երկիւղ ամենայն Հայոց Պատրիկոսէն, և թէ՝ նորա, Ընդհա՛նր ասելոյն, Էջմիածնական Պատրիկոսին հետ յարաբերութիւն չունին, և պատուում են միայն Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքի անմիջական իշխանութեան տակ, — հասատատպես կարելի է ուրեմն ասել՝ թէ մեր Էջմիածնական Պատրիկոսն անհնարին է եթէ Պատրիկոս է ամենայն Հայոց, և ոչ de facto: Ընդ եթէ այս այսպէս, որովք ապա իրաւամբք կոչուում է նա Պատրիկոս ամենայն Հայոց. միթէ միայն եպիսկոպոս ձեռնադրելու և մեռոն օրհնելու համար է տուուած Էջմիածնական Պատրիկոսին այդ վեհաւոր տիտղոսը: — Ո՛չ. Էջմիածնական Պատրիկոսն ստանում է այդ տիտղոսը՝ ոչ թէ միայն մեռոն օրհնելու և եպիսկոպոս ձեռնադրելու համար, այլ և Պատրիկոսական իշխանութիւնը ի գործ դնելու համար՝ աշխարհիս վերայ եղած բոլոր Հայոց վերայ, այն Պատրիկոսական իշխանութիւնը, որ պատշաճ և օրէն է ունենալ մի ազգի Գերագոյն Պատրիարքի և ընդհանրական Պատրիկոսի:

Կարծիքն՝ թէ մեր Էջմիածնական Պատրիկոսն՝ անուանի և եթէ է Պատրիկոս ամենայն Հայոց, և ոչ de facto, որքան սխալ և անհիմն համարուելու լինի, այնու ամենայնիւ պարտական եմք դարձեալ խոստովանելու՝ թէ բոլորովին անհիմն չէ, և թէ ճշմարտութեան մասն ևս կայ նորա մէջ: Ինչպէս:

Տաճկաստանի մեր ազգայինքն, որպէս յայտնի է արդէն մեր ընթերցողաց, ունին այժմ՝ ի Տաճկաց Սուլթանէն հաստատեալ՝ Ազգային Սահմանադրութիւն, ազգային Գրծական և Վարչա-

քական ժողով, և վերջապէս նորընտիր Պատրիարք։ Յանկալի էր հարցանել և իմանալ, թէ մեր՝ ամենայն Հայոց անուանեալ Կաթուղիկոսն՝ որ նստում է Էրզրումի նահանգի Կարնոյ Ազգային Սահմանադրութեան յօրինման և հաստատութեան վերայ, ինչպէս ունեցաւ այդ Ազգային Սահմանադրութեան յօրինման և հաստատութեան վերայ, ինչպէս և դործունէութիւն ունի նա ներկայումս ազգային կրօնական և քաղաքական ժողովոց վերայ, և կամ նոցա գործոց և վճռահատութեց վերայ, և վերջապէս՝ ինչպէս և ինչափսի ազդեցութիւն ունեցաւ նա Կ. Պօլսոյ նոր Պատրիարքի ընտրութեն և հաստատութեն վերայ։ Կարծում ենք՝ թէ այդ գործոց և ոչ մինի վերայ ներգործութիւն և ազդեցութիւն չունեցաւ նա, և ոչ ևս պիտի ունենայ, ըստ որում Տաճկաստանի մեր ազգայինքն՝ ըստ զօրութեան ազգային Սահմանադրութեի՝ ոչ միայն կախումն չունեն Յունական Կաթուղիկոսէն, այլ և կարելի է ասել՝ թէ նորա բաժանեալ են արդէն Ռուսաստանէն։ Ահա ազգային Սահմանադրութեան առաջին արգասիքն, ահա պատուղն այն նոր կանոնադրութեի, որին՝ որպէս մենք, նոյնպէս և մեր միւս լրագրապետ եղբարքն, մինչև ցայժմ տպիտաբար խուսնկ ծխեցինք, առանց մտածելու թէ նորա հետևանքը պիտի լինի՝ խզել Ղո-ՐԷան կապը և բաժանել Տաճկաստանի Հայերը Ռուսաստանի Հայերից։

Ազգային Սահմանադրութեան մէջ, Յունական Կաթուղիկոսի իրաւանց վերայ, և Տաճկաստանի Հայոց հետ ունեցած յարաբերութեանց վերայ, ոչ մի խօսք չկայ, ուրեմն ասել է՝ թէ նա Տաճկաստանի Հայոց հետ գործ չունի։ Միով բանիւ, ազգային Սահմանադրութիւն իրաւունք չէ տալիս Յունական Կաթուղիկոսին՝ խառնուելու Տաճկաստանի Հայոց եկեղեցական գործոց։ Միայն այսքան թեթև կերպիւ յիշուած է թէ „Ազգային Վարչութեան կրօրդ պարտաւորութիւնն է առ Ընծուն Յունաստանեայց Եկեղեցւոյ կրօնական կանոնաց և օրինաց համեմատ վարուիլ“, և թէ „ընդհանուր ժողովը կդումարուի (նաև) Կաթուղիկոսի (որ Կաթուղիկոսի՝ Յունական Ազգամարդ թէ Սուց) ընտրութեան մասնակից ըլլալու համար“։ Ընդ հակառակն Կ. Պօլսոյ Պատրիարքի համար ասուում է՝ թէ նա „զլուխ է իր Ազգին“, և թէ „Պատրիարք ընտրելու անձը՝ ընդհանուր (՞) Ազգի վստահութեան ու յարդանացն արժանի ըլլալու համար՝ Պատրիարքական Աթոռին վայելուչ ամէն յատկութիւններն ու արժանաւորութիւնն ունենայ, և՝ի վաղուց անտի (՞) Պատրիարքութեան յատկացեալ եպիսկոպոսաց պատէն (՞) ըլլայ. միանդամայն Տէրութէ (Ի հարկէ Օսմանեան) կատարեալ վստահութեան արժանաւոր, և գոնէ իւր հօրմէն սկսեալ՝ Օսմանեան հպատակ (՞), և երեսունհինգ տարին լրացուցած ըլլայ“։

Տեսանում էք, Ռուսաստանի հայմագրիք, պիտի կանոններ է կարդում Ազգային Սահմանադրութիւնը. նա պարտաւորում է Ազգային Վարչութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ կրօնական կանոնաց և օրինաց համեմատ վարուիլ (այլապէս մի՞թէ կարող է նա վարուիլ), և այս՝ նշանակում է որպէս թէ՝ պարտաւորութի ունենալ (՞) առ Ընծուն Յունիածնի։ Բայց ուր է պարտաւորութիւնն առ Ծայրագոյն Պատրիարքն և Կաթուղիկոսն ամենայն Հայոց, ուր է Յունիածնական Կաթուղիկոսի իրաւունքները առ Պատրիարքն Կ. Պօլսոյ և առ Վարչութիւնն։ Սոցանից մինն ևս չկայ։ Այլ կայ այն՝ թէ Կ. Պօլսոյ Պատրիարքը „զլուխ է իր Ազգին“։ Եթէ նա գլուխ է, ապա Յունիածնի Կաթուղիկոսը ի՞նչ է։ Ազգային Վարչութիւնը և Պատրիարքը Կ. Պօլսոյ՝ ուներն իրաւունք ընտրելոյ Կաթուղիկոս (լռութէ է անցանում այս տեղ Սահմանադրութիւնը, և չէ նշանակում՝ թէ Կաթուղիկոսը, Յունիածնի, Ազգմամարդի թէ Սուց), բայց Յունիածնական Կաթուղիկոսը՝ որ ընդհանուր ազգի Կաթուղիկոս և Պատրիարք է՝ չունի իրաւունք ոչ միայն Պատրիարք ընտրելու, այլ և յայտնելու իւր կարծիքը ընտրելի Պատրիարքին վերայ, որ „գոնէ իւր հօրմէն սկսեալ՝ Օսմանեան հպատակ“ պիտոյ է լինի։ Այս ևս նոր բան։ Յունիածնական Ընծուն կարող են ընտրուիլ եպիսկոպոսունք և Տաճկաստանէն, իսկ Ընծուն Կ. Պօլսոյ՝ մի միայն Տաճկաստանէն, և այնպիսի եպիսկոպոսունք՝ որք գոնէ յիւրեանց հօրերից սկսեալ՝ Օսմանեան հպատակ լինին։ Այս նշանակէ՝ թէ Ռուսաստանի եպիսկոպոսաց մինն ևս իրաւունք չունի այսուհետև Կ. Պօլսոյ Պատրիարքական Ընծուն նստելու։

Լրագրիս սուղ էջերն թոյլ չեն տալիս մեզ աւելի ընդարձակուիլ այս նիւթիս վերայ, թէպէտ և զգում ենք՝ թէ դեռ շատ ինչ ճիւում է մեզ խօսել։ Բայց առ այժմ այսքանս միայն բաւական ենք համարում յաւելացնել՝ թէ Տաճկաստանի մեր ազգայնոց այսպիսի վարմունքն Ռուսաստանի ազգայնոցս հետ, և խզելն նոցա՝ այն միութէ կապը՝ որոյ հիմը դրաւ հանգուցեալ երջանկայիշատակ Ներսէս Պատրիարքն իւր ընտրութեան ժամանակ, յոյժ ցաւելի է և ափսոսելի։ Կարծում ենք հաստատապէս՝ թէ Տաճկաստանի մեր ազգայնոց պահպանելն Ռուսաստանի Հայոց հետ միութեան կապը, բաց՝ի օգուտից՝ այլ ինչ կարող չէր ծնուցանել։

Լրագրիս նախընթաց համարին մէջ յիշեցինք Պատրիարք Սուքիաս Աբեղեանց Օբէոդոյ Ռուսումնարանի բացումը։ Այժմ արժան ենք համարում հրատարակել նոյն ուսումնարանի Կանոնադրութիւնը, զոր ուղարկած է մեզ մեր թղթակիցը։ Այս է այդ կարգադրութիւնը.

Հիմն և նպատակ։

1. Հաւատոյ Հայ տիկնանց միաբանութիւնը՝ շարժուած լուսաւորութեան սիրոյն և աղջկանց կրթութեան վեմ նշանակութեամբը ընտանեկան կենաց համար, որից կախեալ է ինչպէս իւրաքանչիւր մարդոյ երջանկութիւնը, այնպէս և ազգի բարօրութիւնը, հաստատում է Շուշիումը Օրիորդաց Ռուսումնարան ամէն կարգի աղջկանց համար։

2. Հաւատոյ Օրիորդաց Ռուսումնարանը կոչւում է Պատրիարքաց Սուքիաս Աբեղեանց Օբէոդոյ Ռուսումնարան։

3. Ռուսումնարանը դտնուում է Պարթաղու Մեծարգոյ Քաղաքական վճռակի Հոգևոր Կառավարչի բարձր հովանաւորութեան ներքոյ, ինչպէս իւրաքանչիւր մարդոյ երջանկութիւնը, այնպէս և ազգի բարօրութիւնը, հաստատում է Շուշիումը Օրիորդաց Ռուսումնարան ամէն կարգի աղջկանց համար։

4. Ռուսումնարանը հաստատուած է երթևեկ աշակերտուհեայ համար։

5. Ուսարկայից դասատուութիւնը պէտք է լինի Հայոց լեզուաւ։

6. Ռուսումնարանի նպատակն է պարապատել լուսաւորեալ վարժապետուհիք և լուսաւորեալ մայրեր։

Հոգեբաբոյս-Ընկերը։

7. Հոգաբարձուհեայ թիւը չէ սահմանուած։

8. Ռուսումնարանի Հոգաբարձուհի դառնալու համար վճարուում է ամէն տարի վեց հանէր ոսկի, Ռուսումնարանը պահպանելու համար։

9. Հոգաբարձուհիք ընտրուածն իւրեանց միջից մէկին, Ռուսումնարանի տեսչութեան պաշտօնը կատարելու և յանձնուածն նրան Ռուսումնարանի բոլոր կառավարութիւնը։

10. Տեսչուհին ընտրում է իրան օգնական և նշանակում է վերակացուհիք աշակերտուհեայ վերայ հսկելու։

11. Հոգաբարձուհիք իրաւունք ունին ամէն ժամանակ այցելութի անել Պարթաղու Սուրբ Մարիամա Օրիորդաց Ռուսումնարանին։

12. Ռուսումնարանի ինչպէս պահելու և պահպանելու, նոյնպէս և ուսումն ընդլայնացնելու համար ընդունում են նուէրք բոլոր ազգի անդամներից։

13. Հոգաբարձութիւնը ունի իւր կնիքը և ար-

կու ժապաւինեալ մատեան Օրիորդաց Ուսումնարանի Նարանի Բարձր Հովնտաւորի կնքով և ստորագրութեամբ· մէկի մէջ Ուսումնարանի մուտքը և ծախսը գրելու համար, միւսի մէջ ազգի անդամներուն տուէրքները գրելու համար։

14· Ընդհանրաժողովականութիւնը իրաւունք ունի իւր նկատողութիւնը ընդունել Ուսումնարանը խնդիր գերդաստանի պղջիկներ՝ի հաշիւ բարերար անձանց։

15· Տեսչուհին արձակուրդ է Օգնականին, աշակերտուհիներին, վարժապետներին և վերակացուհուն, ղարաբաղու Եղիշեան ազգային Հոգևոր Դպրոցի Տեսչի խորհրդովը։

16· Տեսչուհին նշանակուրդ է ուսումնական պետներին, վերակացուհուն և ուրիշ ծառայողաց և անուրդ է Ուսումնարանի ամէն ծախսերը։

17· Տեսչուհին նշանակուրդ է տարեկան հրապարակական հարցաքննութիւն, պարգև է տալ գերազանց հանդիսացող աշակերտուհեացը և տարեկան հանդիսի մէջ տալիս է լիովին հաշիւ նիւթական միջոցների և ուսումնական մասին համար։

Ո՚սո՚ս՚ճական մասը։

18· Ուսումնարանը գանուրդ է ըստ ուսումնական մասին ղարաբաղու Եղիշեան Ազգային Հոգևոր Դպրոցի Տեսչի հսկողութեան ներքոյ։

19· Դասատուութեանց համար Սուրբ Մարիամ Ուսումնարանի Տեսչուհին նշանակուրդ է վարժապետներ ղարաբաղու Եղիշեան Ազգային Հոգևոր Դպրոցի Տեսչի խորհրդովը։

20· Տեսչուհին պարտաւոր է անմիջապէս հրաւիրողութիւն ունենալ դասատուութեանց վերայ։

21· Դասատուութիւ տարեկան են· 1, կրօն· 2, Սրբազան պատմութիւն· 3, Հայոց լեզու· 4, Ռուսաց լեզու· 5, Թուաբանութիւն· 6, Հայոց պատմութիւն· 7, Աշխարհագրութիւն· 8, Ձեռագործութիւն· 9, Վայելչագրութիւն· 10, Նկարչութիւն և 11, Երգեցողութիւն։

12· Վերակացուհիք պարտաւոր են հսկողութիւն ունենալ աշակերտուհեաց վարուց վերայ նրանց Ուսումնարանումն եղած ժամանակումը, ձեռագործութիւն սովորցնել և նայեցողութիւն ունենալ դասերը պատրաստելու համար։

23· Ուսումնարանը աշակերտուհի տալ ցանկացողները պարտաւոր են խնդրագիր տալ Սուրբ Մարիամայ Ուսումնարանի Տեսչուհուդ անունով։

24· Ամէն մի աշակերտուհուդ համար վճարուում է տարին տասն և հինգ մանէթ· Թղթի դրքերի ու ձեռագործութեան նիւթերի հոգայողութիւնը անուամ են աշակերտուհեաց տէրերը։

Յանկանուամ ենք՝ի սրտէ այս նոր ուսումնարանիս ամենայն յաջողութի՚։

Ա՚պրիլ 5 ին, ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍՐՆ ԱՄՆՈՂՈՐՄԱԾԱԲԱՐ բարեհաճեցաւ վարձատրել վասն գերազանց ջերմեռանդն ծառայութեան՝ Սբ՚ոյն Սրտնեղաւոյ Երիցուդ ապ՚ետ՚ն՝ կայսերական թագով ղարդարեալ ղեղանդան զկրօնուսոյց վարժապետն և Աւագ Ուսուցիչն Հայկական լեզուի՝ի Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց՝ զՄատթիսարոան Ատուածաբանութեան զՄոթէ Մոթբենց։

— Ա՚պրիլ 10 ին, ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍՐՆ ԱՄՆՈՂՈՐՄԱԾԱԲԱՐ բարեհաճեցաւ շնորհել Սբ՚ոյն Աննայի ապ՚ետ՚ն՝ ապ՚ետ՚ն ղեանդանը՝ Ատարթանոս Հայոց վիճակաւոր Առաջնորդ Պատմէոս արքեպիսկոպոսին վեհապ՚ետ՚ն։ Սբ՚ոյն Աննայի երէցուդ ապ՚ետ՚ն ղեանդանը՝ Անգամն Պատուական Հայոց Հոգևոր կառավարութեան և կրօնուսոյց վարժապետին Պատարագաց առաջին Հնոցարական վարժարանին՝ Յարութիւն աւագ քահանային կնո՚ղեանց։ և Սբ՚ոյն Աննայի երէցուդ ապ՚ետ՚ն ղեանդանը՝ կրօնուսոյց վարժապետին և Ուսուցչին Հայոց լեզուի՝ի Տէր-պէնտեան Նահանդական ուսումնարանի՝ Աբրահամ քահանային Սպանդոնեանց։

Ընդհա՚ս՚ մէջ դրուած են·

»Ուսինեան Լէոն վեցերորդ Հայոց վերջին Թագաւորին դէմքին և գերեզմանին պատկերը՝ հոգածութեամբ Նէրսէսին Հանդիսին խմբագիր արժանայարգ պարոն Մ· Բ· Խրիմեանին՝ գեղեցիկ ուրուագրութեամբ տպուելով՝ի փարիզ, կըվճաուի Իգմիրի մէջ գտնուեան յարգոյ պարոն Ադամին քով, հասը երկու ֆրանքի։

»Յայտնի է՝ որ յիշեալ մեր գժբաղդ Թագաւորը մեռաւ՝ի փարիզ յամի Տեառն 1393, և իւր մարմինը ամփոփեցաւ Նոյն մայրաքաղաքին Նէղեստինեանց եկեղեցին հոյակապ գերեզմանի մը մէջ»։

— Ա՚ասիկ մէջ կարդում ենք·

»Իգմիրի ծովեզի անուն իմաստասէից հանդէսին մէջ կը կարդանք թէ յիշեալ քաղաքի Թագաւորան խորհուրդը որոշեր է որ այսուհետև Ս· Սոֆիայեան եկեղեցւոյ մէջ երբեմնոյ ժամերգութիւն ըլլայ։ Փափաքելի էր, որ այս սովորութիւնը մայրաքաղաքիս Ս· եկեղեցեաց մէջ ալ գործադրուէր»։

Այսպիսի նոր սովորութե՚ մտանելուն՝ի Հայոց եկեղեցի Համբաւաբերն երբեք ցանկանալ կարող չէ, և և զարմանալի է երևում նորան՝ թէ ի՚նչպէս այսպիսի մեծահռիւ գործը կարող է լինում վճռել մի մանաւոր թագաւորական խորհուրդ։

ՀԱՄԱՌՕՏԱԳԻ՚Ց ՊԱՏԿԵՐ

Նեբ՚էն ֆերպա՚որ՚ոթեան Լազարեան ճեմարանի Աբ՚ե՚լեան լեզո՚ոց յամին 1855 յ1863։

(Շարունակութիւն· տե՚ս Հ· 63)

ԺԴ· Անո՚ան՚ և պոհմանո՚ան՚ աշակերտաց ա՚ջնահերձ՚ի Լազարեան ճեմարանի էրա՚ամ՚բ՚ա՚ ա՚ա ժԲ· ասպ՚ետ՚ան, յամին 1855 յ1863։

1. Միհէն Բուրջալեանց։
2. Մ՚ինաս Խալիպեանց։
3. Խիմաբզէգ Խիմաբեանց։
4. Խաչատուր Տաղտեեանց։
5. Ռաբեղ Քեհիւնեանց։
6. Պերոզ Մսերլեանց։
7. Սահակ Ալամհանեանց։
8. Պօղոս Աղամալեանց։
9. Գրիգոր Ամիրեանց։
10. Ռաբեղ Ամիրեանց։
11. Ղևրսէս Փոնոմարեանց։
12. Յովհէփ Հախվէրտեանց։
13. Գէորգ Խաչատուրեանց։
14. Պարապետ Արզանկուլեանց։
15. Գալուստ Տէր Մարտիրոսեանց։
16. Նիկողայոս Գործոյեանց։
17. Դաւիթ Վարդանեանց։
18. Մխիթար Շահազիզեանց։

Բաց՚ի սոցանէ և 27 աշակերտք՚ի Ռուսաց։

ԺԲ· Անո՚ան՚ և պոհմանո՚ան՚ աշակերտաց ա՚ջնահերձ՚ի Լազարեան ճեմարանի էրա՚ամ՚բ՚ա՚ ա՚ա ԺԳ· ասպ՚ետ՚ան, յամին 1855 յ1863։

1. Ադէքսանդր Պետոյեանց։
2. Նիկողայոս Պապովեանց։
3. Աբշակ Մխանտաբեանց։
4. Խոսհակ Ալաճալեանց։
5. Գասպար Յովհաննիսեանց։
6. Ալագ Թաւրիզեանց։
7. Յովհաննէս Տէր Սահակեանեանց։
8. Գրիգոր Ալաճալեանց։
9. Սահակ Սահակեանեանց։
10. Յակոբ Էլեմիրզեանց։
11. Յովհաննէս Փիրատեանց։
12. Ղևոնդ Բաստամեանց։

ՄՈԼՏՈՎԱԼԱՔԻԱՅԻ ՄԻՋ ԳՏՆՈՒՕՂ ՀԱՅԵՐԸ

(վ՚ոտ՚ա՚ ՊԸ Լ՚ Ռո՚մանի լրագրէն)

Մ՚եհեմեաներորդ դարուն մէջ պարսից յարձակումներէն նեղուելով, բազմաթիւ Հայք գաղթեցին և եկան Բոլոնիայի և Մոլտավիայի մէջ պատսպարուելան։ Նոր գաղթականութիւններ՝ աւելի մեծ թուով, տեղի ունեցան յամին 1342, 1418 և 1606։ Արևելքի վաճառականութիւնը ուրիշ Հայեր ևս հրաւիրեց՝ի կոստանդնուպոլիս. և ասոնք ամենքը վալաքիայի և Մոլտավիայի վարի կողմերը հաստատեցին իրենց բնակութիւնը։

Հայք՝ վալաքիայի մէջ ամեն քաղաքական իրաւունքները կը վայելեն և իրրև բնիկ քաղաքացի համարուած են. այս արտօնութիւնը իրենց գաղթականութեան ժամանակէ՚ի վեր բաւացած են։ Մոլտավիայի մէջ, 1859 Օգոստոսի 18՚ին եղած դաշնադրութենէ՚ի վեր նոյնպէս։ Մոլտավիայի մէջ, 1859 Օգոստոսի 18՚ին եղած դաշնադրութենէ՚ի վեր բնիկ քաղաքացիութե՚ իրաւունքը։

Պուքրեշ մէջ երեք հարիւր չափ Հայ դերդաստանք կը գտնուին և փիդհոթի քաղաքը քանի չափ միայն Հայ ընտանիք կան։ Մոլտավիայի մէջ աւելի բազմաթիւ են. վասն զի գրեթէ 1,200 գերդաստան կան, իննը քաղաքայ մէջ բաժնուած։

Մոլտավիա բնակող Հայք՝ իրենց բուն հայրենեաց լեզուն կը խօսին մէջերնին. իսկ անոնք որ վալաքիա կընակին, Թուրքերէն կը խօսին։ Այսու ամենայնիւ այս վերջիններս Հայերէն տառերով կը գրեն, ինչպէս որ Մոլտովալաքիայի բնակիչ Հրեաներէն շատերը Եբրայեցի տառերով գերմաներէն կը գրեն։

Րումանիայի բնակիչ գրեթէ բոլոր Հայք՝ վաճառական կամ արհեստագործք են. քիչ Հոգի կը գտնուին, որ ազատական արուեստից հետևին։

Պուքրեշ քաղաքը՝ Հայք ըստ մեծի մասին կը բնակին մտանուոր թաղ մի, որ Հայոց թաղ կը կոչուի, և արևելեան սովորութեանց մէկ քանին մինչև ցայսօր պահած են։ Առանց Թուրքաստանի կանանց պէս պահուած ըլլալու, Հայ տիկինները շատ դուրս չեն ելլեր և արևելեան կանանց անհոգութենէն բան մը ունին վրանին։ Իրաւամբ կը գովեն Հայկազեան կանանց ուժեղ և կորովի գեղեցկութիւնը՝ որ մարդոյս միաբը կը բերէ զօրեղ ցեղերը։ Հայ տիկինները շատ կը սիրեն ազամանդեայ զարդերը, նմանապէս բայ գոյները և մեծագին ու շքեղ կերպասները, որոց մէ բաղկացեալ են իրենց հագուստները ըստ մեծի մասին։

Հայոց թաղը խաղաղ տեսք մի ունի որ մարդոյս աչքը կը հանգուցանէ. քաղաքին կեդրոնէն բաւական հեռու ըլլալով, կարծես թէ պեղմին է։ Իւրաքանչիւր տուն շրջապատեալ է՝ մեծ խնամքը գարմանալ պարտիզ մի· որոց մէջն ծառոյ ծաղկազարդ կանաչութիւնը ամառը զովութիւն և անուշահոտութիւն կու տայ փողոցներուն· որոնք շատ անցուդարձ չունին։ Եկեղեցին շինուած է այս խաղաղ փողոցներուն մէջտեղը, իրրև մատնանիշ մի Աշ՚ անմեղ Հոգւոյ մի մէջ։ Եկեղեցւոյն չորս կողմը ընդարձակ բակ մի կայ, որ միանգամայն գերեզմանատուն է։ Շատ անգամ զրուցած եմք և կը կրկնեմք թէ Րումանիայի մէջ մեռը տխուր բան մի չունի։ Հայոց մէջ, ինչպես նաև Մոլտովալաքացւոց մէջ, գերեզմանատունը հանգստեան պարզ դաշտ մի է, որ ամենն ին թոռնդան մնացած մարմինները չպատռտած եր, որոնք մեր տրտում կեանքոյ սևամազձ բնակիչներն են։ Արեգակը գերեզմաններուն մարմարիոնին վերայ կը խաղայ։

ուր մամուռը ժամանակ չունի բուսնելու. վասն զի այս գերեզմանաց այցելութեան կ'երթան առ մեզ օր այն անձինքը՝ որոց բարեկամները այնտեղ հանգստացած են։

Ի ՓԻՆՃԻ 1781 տարին Պուքրէշի մէջ տախտակաշէն եկեղեցի մի կար, խեղճ ու գեղջուկ շինուած մի, համանման տաճարաց նախնական եկեղեցւոյն։ Նոյն տարին քարաշէն եկեղեցի մի կանգնեցին. զոր կը տեսնեմք այսօրուան օրս։ Արտաքին տեսքը երևելի բան մը չունի. քանզի Ռիւզանդեան ճարտարապետութեան բարեխառնեալ ձևն է. զոր կը դիտեմք Րումանիայի ամեն եկեղեցեաց մէջ։ Հայոց եկեղեցին երկու դուռ ունի. որոց մէկը արևմտից և միւսը կանոնաց յատկացեալ է։ Նոյն իսկ տաճարին մէջ արք և կանայք բաժնուած են. այսինքն առաջինները աւագ խորանին մօտ եղած կողմը կը կայնին, և երկրորդները տաճարին առաջակողմեան մասին մէջ. յատուկ շրջապատ տեղ մի ունին և ընդարձակ վերնատուն մի, որ սիւներու վերայ հաստատեալ է։

Այս եկեղեցին մեծաւոր շատ վայելուչ կերպիւ նորոգեցաւ. խնամք ազգային հոգաբարձուաց խորհրդոյն. որոց յանձնուած է ազգին ընդհանուր օգտիցը վերայ հսկել։ Այս խորհուրդը բաղկացեալ է տասներկու անդամներէ, որոնք իրենց քաղաքակիցներէն ընտրուած են։ Առնոց յանձնուած է եկեղեցւոյն և դպրատան ծախքը ու բարեկարգութիւնը, ու միանգամայն միշնորդ կամ հաշտարար դատաւորաց պաշտօնը կը կատարեն։ Հոգաբարձուաց խորհրդոյն այժմեան անդամներն են, կարապետ Ակօշօղլու, կարապետ փիլիպպոս օղլու, Խաթերան Հոնոփէր, Նազարադ Արթինովիչ, Հաճի Թագուոր Արթինեան, Մանուկ Ղևոնդեան, Յովհաննէս Փորթորեան, Մըկըրտիչ Տիլան և Խաչատուր Մկրտիչ։ Այս անուանց անսովոր արտասանութիւնը ազդեցութիւն մի ըրին մեր վերայ, և այս պատճառաւ հրատարակեցինք զանոնք. միանգամայն յարգանք մի մատուցանելու համար անոնց անձնանուէր ջանիցը, զոր ի գործ կը դնեն վասն օգտից ազգին, որուն երեափոխանները են։

Մանաւոր յիշատակութեան արժանի է Ա-ՃԷՄ օղլու կարապետ ազգային անխոնջ և բարենախանձ եռանդը, որով առաջարկեց և ի գործ դրաւ զանազան բարեկարգութիւններ, զորս հաճութեամբ սրտի կը նշանակեմք այս տեղ։ Քանզի անոր և հոգաբարձուաց նոր խորհրդոյն չնորհիւր Հայոց եկեղեցին մեծ խնամով և վայելուչ կերպիւ զարդարուեցաւ։ Այս զարդերուն մէջ մեծ սիւ Լէքքա պատկերահանին չինած երեք պատկերը տեսանք, որոնք անկեղծ գովութեանց արժանի են. այս պատկերներն են Աստուածածին մի՝ իր բազկացը մէջ ունենալով Յիսուս մանուկը, սուրբ Յովհաննէս մի և սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մի։ Մօսիւ Լէքքա շատ աղեկ հասկըցած է կրօնական նկարչութեան ձևը՝ անվնաս պահելով արհեստին բարի աւանդութիւնները։

Դիտեցինք նաև քրիստոս մի, ձաղկման սիւնին վերայ կապուած։ Առիկա բիւրս ու վայրենի պատկեր մըն է, որուն գլխաւոր արժանիքը՝ եբրուսաղէմէն եկած ըլլալն է։ Հայոց եկեղեցին՝ իւր բազմատեղեան գեղեցիկ ճրագարաններովը, ոսկեզօծ շքեղ սեղաններովը և հետաքրքրական մեծագին զարդարանօքը՝ տեսնելու արժանի տաճար մըն է։

Հայոց դատաւորութիւն՝ արևելեան ուղղափառ դատաւորութիւնն է։ Իրենց եկեղեցւոյն գերագոյն գլուխը՝ կաթողիկոս կը կոչուի, և Հայաստանի մէջ Էջմիածին գիւղաքաղաքը կը բնակի։ Բայ յայսմանէ ունին պատրիարք մի՝ի Կոստանդնուպոլիս և պատրիարք մի՝ի սուրբ Երուսաղէմ։ Իրենց դատաւորութիւնը քիչ տարբերութիւն ունի Րումանցւոց դատաւորութենէն։ Հայոց եպիսկոպոսները միթր կամ թագ մի կը դնեն որ Հռովմէական եպիսկոպոսաց միթրին կը նմանի. տակաւ հին Պարսից միթրն է։ Հայոց քահանաները բոլորակաձև խոյր մի ունին ոսկիով և ադամանդներով զարդարուած և տեսակ մի լայն փողպատ՝ մի և նոյն նիւթերով շինուած. ասոնց երկուքն ալ հին Մոլեխականութեան քահանայական զարդերը կը յիշեցընեն։ Աստուածային պաշտաման, արծաթեայ գաւազաններ կը շարժեն, որոց գլուխը աստղեր և փոքրիկ զանգակներ կան. ասոնց ձայնը կը միաբանի սուրբ պատարագին երգոցը հետ։ Այս գաւազանները քրիստոս կը կոչուին։

Եկեղեցւոյն գով վարժարան մի կայ մանկանց համար. որոց կը սովրեցընեն գաղղերէն, Հայերէն և վալաքերէն. աշակերտաց թիւը 60 ի չափ է։ Եկեղեցւոյն և դպրատան տալեկան եկամտից գումարը հազիւ թէ 140 տուքաթ ոսկիի կը հասնի։

Հոգաբարձուաց խորհրդոյն անդամներէն մէկը՝ ԱՃԷՄ օղլու Գաբրիէլ աղան յիշեալ վարժարանին մէջ հայերէնի դասատուութիւն կ'ընէ ձրիաբար։

ԲԱՆ

ասացեալ յաշակերտաց Լազարեան ճեմարանի առ ՀՈՎՍԷՓ Ե. ՈՍԿԱՆ։

Վեհարն Տէր

Սէծ Բարերար Ազգային

Օրաւարճացեալքս աւետիսք յարուցեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և այլ ևս յաւելեալ ի մեզ ուրախութիւն՝ այնու, զի Վ երնականն Տիեզերութիւն արժանացոյց զմեզ ի սերկեանս տօնախումբ հանդիսի յանդիման լինել Սուծի Խարերարիդ, և զուարթաճաղիկ յաւէտից՝ զպատկառելին Ձեր տեսանել դէմս, փութալ փութամբ ասկս լի հրճուանօք՝ դընորհապարտ սրբոյ մերոյ զգոհութիւն զՀայրարուրով սիրոյդ որ առ մեզ՝ խոնարհանուէր բանիս արտայայտել, հանդերձ պաղատանաւն ուղղութիւք առ ինքնիշխանաբար Յարուցեալն ի մեռելոց։ Եւ այս իսկ է մեր ամենեցուն միաշունչն և ըղձափափագ հայցուած հանապազորդեան, զի աւուրք յաւուրս յաւելցին կենաց Ազգայնոյ բարերարիդ՝ ի շահ օգտի և ի բարեբաստութիւն Հայազարմ մանկտուց, մանաւանդ Ձերոցս երախտագիտասանուց՝ տաւաղելոց ընդ յարկաւ Տաճարին գիտութեանց — Լազարեանն Ճեմարանի։ Լազարեան Աշրեգեցի։

Ի 19 Ապրիլի, 1864 ամի։

ՕՇԱԿԱՆ

Յունուար 1864։

Ամպիսի առարկայ՝ որ Ազգային ընդհանուր տեղեկութեան արժանի համարուի — Ամպիսի նիւթ՝ որ պէտք ծառայէ մի հասարակութեան օգտի և փառաց համար — Ամպիսի գործ՝ որ Ազգի երջանկութեան և բարօրութեան յառաջադիմութեան պայմանաւ և նպատակաւ է գործուած, „Ձէ պարտ ընդ զրուանաւ գնիլ“. և արգարև չէ կարող թաքչիլ քաղաքն՝ որ լերան վերայ կառուցուած լինի։

Ազգի լուսատու ճրագներն՝ փառք Աստուծոյ՝ հետ ղհետէ լուսատու իւղեր ընդունելով իւրեանց մէջ՝ ճառագայթաճաք փայլեցնում են լոյսերն, և բաւական տարածութեամբ լուսաւորում են Ազգի պալատներն, որ վաղուց լոյս չըտեսանելով՝ դարձել էին մի Թուրդինեան Աորը-նուշ — փառք Աստուծոյ՝ Ազգի բարերար վաչականներն սիրա են առնում, և զօրանում են՝ լուսաւորութեան թագուհի՝ վարսենկայ յորդորանօքն ներս մտնել, և խորտակել այն խաւարային դռներն, որք սարսափեցրել էին համայն Ազուանից ամբոխի սիրտն։

Լուսաւորութեան մի փոքրիկ ճրագ այսօր տեսնում է Ազգի ունեցած բարձրանալոյ Օշականայ Հայ-Քրիստոնեայ հասարակութեան արտերումն բաղկացած մի բլրակի վերայ. չեմ ասում աշտարակի. և մեծայոյս եմք թէ՝ այս ճրագն՝ որ մի Ազգապետի մարդասէր խնամքն ու ընորհիւն է սատնում իւր լոյսն, անշէջ պիտի մնայ յաւիտեան, և ոչ սակաւ լոյս պիտի տայ, չէ թէ միայն այն բլրակի ներքև եղած մութն արտերին. այլ և՝ պէտք է լուսաւորէ իւր շրջակայ վայրերն։

Այս՝ Ազգի յառաջադիմութեան համար ծառայող նիւթն, և լուսաւորութեան մեքենական գործին՝ որ առիթ և տեղի տուեց ինձ խորհելոյ, խօսելոյ և գրելոյ — ինչպէս և ինչքան ինձ, նոյնպէս և ամենայն Ազգայնոյ ուրախութիւ պատճառ պէտք է լինի այժմ և միշտ։ Վասն որոյ փութացայ ահա աւետաբեր լինելով գրել — գրել և ոչ անխայել. և սուրբ Լուսաւոր թարգմանչին՝ թարգմանի պաշտօն կատարելոյ իրաւունքն ստանալով՝ ձայնել ամենայն Հայբենասիրաց՝ սուրբ Աւետարանի այն հրաւիրական ձայնն՝ որ ասէ „որ ծարաւի իցէ, եկեսցէ և արբցէ յայն ջրոյն. որ ոչ թողու ծարաւիլ յաւիտեան“։ Իսկ այս ձայնս ոմի պէտքէ հեռագրական գծով տանի թափանցէ Ազգայնոյ սրտերի մէջ, եթէ ոչ մի լրագիր՝ որ անխոնջ ծառայում է Ազգի գեպ՝ի լուսաւորութիւնն յառաջադիմութեան սուրբ և բարի նպատակաւ։

Ուրեմն առ Ձեզ են բանք իմ, ով ժիր Մշակդ Ազգի, և հաւատարիմ Ալգեպանդ մեծի Այգւոյն, Տանն Հայոց, որ Դուք այս քաղցր և հարկաւոր պաշտօնս ստանձնելով Ձեր վեհ անձին վերայ, պատուական լրագրոյն օժանդակութիւն և միջոցաւ հրատարակել տալ այս լուրս՝ Ազգայնոց տեղեկութեան համար։ Հրատարակեցէք, որ մեր հեռաւոր եղբարքն ևս, որք դժուէ Օշական գիւղի ինչ դրութեան մէջ լինելն ցայսօր չէն խնացել, և սուրբ Մեսրովբայ՝ երբեմն փառաւոր, և այժմ բոլորովին անշուք և տխուր՝ վիճակի մէջ գտանուած Եկեղեցւոյ համար ծանօթութիւն չունին, տեղեկանան, տխուրժելեաց վերայ ուրախանան, և չխորժելեաց համար արտմին, և հոգ տարեալ աշխատին . . . ։

Ազդարկելով Ձեզ այս ամբողջ առաջադրութիւնն Օշականայ, խնդրեմ՝ բարեհաճիք „Հառաջաբեր“ լրագրոյն թերթերի մէջ տեղ տալ, և տպագրութեամբ հրատարակել *. որպէս զի ես գրելովս, և Դուք հրատարակելովդ՝ կարողանանք մի մանաւանդ ծառայութիւն առնել Ազգին, և Ս. Թարգմանչի խնկելի դամբարանին. որոյ շնորհքն բարեմաղթելով Ձեզ և Ձերայնոյ վերայ՝ մնամ ևն։

Թարգման Թարգմանչին Հայոց,
Մեսրովբ Վարդապետ Սմբատեանց։

---

* Յիշեալ առաջադրութիւնքը կատարին լրագրիս յաջորդ համարների մէջ։ Խմբագիր։

Խմբագիր և Տէր Լուսաւոր Ջ. ՄՈՒՐԵԱՆՑ։

Дозволено Цензурою 14-го Апрѣля 1864 года въ С.-Петербургѣ. Печатано въ Типографіи Императорскаго Московскаго Университета (Катковъ и К°).